

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՍԵՄԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում է հայերենի օտար փոխառությունների, մասնավորապես սեմական որոշ փոխառությունների խնդիրը: Ստուգաբանական վերլուծության են ենթարկվել հայերենի *բերդ, խմոր, կաշի, կեղեւ, կնիք, ցամաք, փոխ, փրկել* արմատները, որոնք համարվում են սեմական փոխառություններ: Այս արմատներն ունեն զուգահեռներ հնդեվրոպական և ֆիննաուգրական որոշ լեզուներում, մինչդեռ դրանք կամ չեն նկատվել, կամ համարվել են պատահական նմանության արդյունք: Նոստրատիկ լեզվաբանության բնագավառում կատարված նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ հայերենի օտար փոխառությունների խնդիրը նոր մոտեցումներ է պահանջում:

Առանցքային բաներ. նոստրատիկ լեզվաբանություն, սեմական փոխառություններ, ծագումնաբանական փունջ, հնդեվրոպական նախաձև, ֆիննաուգրական լեզուներ:

Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում զբաղեցնում է առանձնահատուկ տեղ: Համեմատական լեզվաբանության զարգացման առաջին փուլում այն համարվել է իրանական լեզու (Հ. Պետերման, Ֆ. Վինդիշման, Պ. դը Լագարդ, Ֆ. Մյուլլեր): Հետագայում Հ. Հյուբշմանը հայերենի հնչյունական և ձևաբանական համակարգերի վերլուծության հիման վրա ճշտեց նրա տեղը՝ ինքնուրույն ճյուղ հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզու, առաջացրել է և, հավանաբար, դեռևս առաջացնելու է խնդիրներ: Լեզվաբաններից ոմանք հայերենի արմատների մի մասը բխեցնում էին հնդեվրոպական նախաձևերից՝ ոչ հնդեվրոպական շերտը համարելով փոխառյալ կամ անհայտ ծագում ունեցող շերտ (Ա. Մեյե, Հ. Աճառյան և ուրիշներ): Ոմանք էլ, ոչ հնդեվրոպական շերտը հիմք ընդունելով, այն համարում էին խառնուրդ կամ խաչավորված լեզու (Ն. Մառ, Գ. Ղափանցյան): Որոշ լեզվաբաններ, ելնելով հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքում զբաղեցրած «եզրային» դիրքից, փորձել են ավելի մերձավոր կապեր տեսնել հայերենի և փոյուգերենի (Բենեցյանու), հայերենի և խեթերենի (Բոնֆանտե) կամ հայերենի և ալբաներենի միջև (Պեդերսեն, Պիզանի, Բոնֆանտե) [1]:

Հայերենը նույնիսկ այսօր ունի հազարավոր չստուգաբանված արմատներ: Հ. Աճառյանի «Արմատական բառարանն ընդգրկում է 10772 արմատ, որից 909 մեկնված է իբր բնիկ, 4016-ը՝ իբր փոխառյալ»: Հ. Աճառյանը հաշվել է 5572

անձանոթ բառ: Նա հավանական է համարում, որ սրանց մի մասը հայերը փոխ են առել խալդերենից [2]:

Հայտնի է, որ Հ. Աճառյանն իր բառային բոլոր քննությունները կատարել է երիտքերականների (հայագիտության մեջ՝ Հ. Հյուբշմանի) սահմանած հնչյունական օրենքների ու իմաստային համապատասխանությունների սկզբունքով. ստուգաբանության չափանիշ է համարել հայերենի հնչյունական օրենքների անխախտելիությունը: Այս սկզբունքը գրեթե անփոփոխ պահպանվում է մինչև այսօր: Սրա հետևանքով բազմաթիվ հայերեն արմատներ, որոնք զուգահեռներ ունեն հ.-ե. լեզուներում, սակայն չէին համապատասխանում հ.-ե. հնչյունական օրենքներին, համարվում էին անհայտ ծագման բառ կամ փոխառություն որևէ, թեկուզ անհայտ կամ մեռած օտար լեզվից: Եթե հայերեն բառը համարժեքներ չունեն հ.-ե. լեզուներում, ապա այն հաստատապես փոխառություն էր համարվում, քանի որ տարբեր լեզվաընտանիքների ցեղակցության գաղափարը ընդունելի չէր: Օրինակ, հայ-սեմական բառային ընդհանրությունները համարվում էին միակողմանի փոխառություն սեմական որևէ լեզվից կամ պատահական նմանության արդյունք: Այժմ արդեն պարզ է, որ տարբեր լեզվաընտանիքների միջև գոյություն ունեցող ընդհանրությունների մի մասը լեզվական հնագույն առնչությունների հետևանք է: Սակայն բառի իրական պատկանելությունը որոշելը երբեմն լուրջ դժվարությունների հետ է կապված: Օրինակ՝ ուրալյան լեզուներում անուն արմատը ներկայացնող բառերի նախաձևը վերականգնվում է՝ *nime: Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը այն հ.-ե. փոխառություն են համարել [3]: Սակայն Ֆ.-ուգր. լեզուներում, ի թիվս ո ձայնորդով սկսվող տարբերակների (ֆինն., էստ. nimi, վեպս. név, խանտ. nem, մանս. nam), կան նաև I ձայնորդով սկսվող տարբերակներ՝ էրզ. лем, лям, մոկշ. лем, մար. лым, лым: Որտեղի՞ց են այս տարբերակները, եթե որպես հ.-ե. նախաձև վերականգնվում են *(ə)nəm-, *nom- ձևերը: Կարելի էր պնդել, թե սա ինքնուրույն զարգացման արդյունք է Ֆ.-ուգր. լեզուներում, եթե չլինեին անատոլիական զուգահեռները՝ խեթ. lāman/lamn «անուն», հ.լուվ. alaman «անուն», lamni- «հայտարարել, հռչակել»: Այս փաստը խոսում է այս ընդհանրության բացառիկ հնության մասին: Նման դեպքերում դյուրին չէ որոշել, թե բառը նախապես որ լեզվաընտանիքին է պատկանել: Չէ՞ որ գործ ունենք բոլոր լեզուների համար հնագույն մի շրջանի հետ, որից գրավոր ավանդված ոչինչ չկա: Զարմանալի չէ, որ միևնույն արմատը լեզվաբաններից ոմանք համարում են հ.-ե. փոխառություն, մյուսները՝ բուն ուրալյան:

Հայերենի կովկասյան որոշ փոխառությունների խնդրին արդեն անդրադարձել ենք «Հայերենի կովկասյան փոխառությունների հարցի շուրջ» հոդվածում [4]:

Հայերենի փոխառյալ բառերի ցանկում նշանակալից տեղ են զբաղեցնում նաև սեմական փոխառությունները: Այդ բառերից մի քանիսը զուգահեռներ ունեն նաև ֆ.-ուգր. և հ.-ե. լեզուներում, որոնց նախկինում գրեթե ուշադրություն չի դարձվել:

Վերլուծենք հայերենի սեմական փոխառություններից մի քանիսը.

Իբերդ - Հ. Աճառյանը համարում է ասորեստանյան փոխառություն՝ bi-ir-ti, bi-ir-tu «բերդ, ամրոց», որից՝ արամ. «դղյակ, բերդաքաղաք» [5]: Ֆիններենում pirtti նշանակում է «խրճիթ», pirta «հաստոցասանր», հունգ. börtön «բանտ» (հմմտ. հայ. բերդ «բանտ» նշանակությամբ), ուղմ. борд «պատ, ցանկապատ», որը նաև նշանակում է «երկարության միավոր ջուլիակության մեջ», կոմի берд «երկարության միավոր»: Ըստ Մ. Ֆասմերի՝ ռուսերեն бёрдо «ջուլիակագործի հաստոցի մաս, հաստոցասանր» արմատը կա նաև մյուս սլավոնական լեզուներում, իսկ բուլղարերենում бърдо և սերբերենում бр`до նշանակում է «բարձունք, բլուր, սար», ինչպես նաև՝ լատիշ. birde «ջուլիակագործի հաստոց», հ.բ.գերմ. bort «նավեզր»: Բոլորի ծագումը նա անհայտ է համարում [6]:

Կարծում ենք, այս արմատի ծագումնաբանության վրա որոշակի լույս կարող են սփռել ֆ.-ուգր. լեզուների որոշ օրինակներ, որոնք, թերևս, համարժեք են հայերեն պար արմատին. ֆինն. paartaa «շրջապատել» կոմի бердны «թաքնվել, քողարկվել», бердö «մոտ», берд «շուրջ», ուղմ. борд «(ցանկա)պատ», ուղմ. Пърдыш «շղարշ, վարագույր», հունգ. vár «ամրոց, դղյակ», մար. авырътыш «պատնեշ, թաքստոց, վահան» (=հայ. վերտ «շղթայի պես հյուսված զրահ»): Միևնույն արմատին է առնչվում իտալ. parete «պատ» բառը: Հայերենում, ըստ երևույթին, կատարվել են հետևյալ անցումները. պար >պար-տ >պատ, իսկ բերդ-ը այս արմատի ձայնեղացած տարբերակն է, այսինքն՝ պարտ և բերդ արմատները ծագումնաբանական միևնույն փնջին են պատկանում: Թերևս, սեմական փոխառություն համարվող շպար բառի հիմքը նույնպես հայերեն պար արմատն է:

Իսմոր (ասոր. xma՛ «թթվել, խմորվել») – Հետաքրքիր են ոչ միայն ֆ.-ուգր. լեզուների համարժեք օրինակները՝ կոմի шом «թթխմոր, թթու», шома «ած. թթու», шоммыны «թթվել», ուղմ. шөм «թթխմոր, արբածություն», шöман «խմորում, արբածություն», այլև այն, որ այդ լեզուներում կան բառեր, որոնք թույլ են տալիս հայերենի խմոր արմատը կապել մեկ այլ արմատի հետ՝ հայ. շիբ

- էրզ. сәпей «կծու», մոկշ. шапарма «թթու, կծու», шапаромс «թթվել», ֆինն. hapar «ած. թթու», happo «գոյ. թթու», hapata «թթվել», happi «թթվածին», էստ. hape «գոյ. թթու», haru «ած. թթու», harnema «թթվել», harnik «թթվածին», հունգ. savó «շիճուկ»: Հայերեն շիբ արմատի դիմաց հ.-ե. այլ լեզուներում գտնում ենք՝ խեթ. šiyai-/ šiyai- «ածկ. թթու», անգլ. sour «թթու», ռուս. цавель «թրթնջուկ», жупел «ծծումբ» < հ.բ.գ. swebal, swefal «ծծումբ», լատին. sāpo, ōnis «օճառ»: Միևնույն կառուցվածքային կաղապարով են կազմված հայերեն *բոլոր, ոլոր, սալոր, խնձոր, բոսոր, պղպոր, սովոր, ժխոր, կլոր, գլոր, կտոր, հապոր, ցնոր, խոշոր* բառերը:

†կաշի (ասորաբար. փոխառություն՝ սումեր. kuš «կաշի, մորթ», արար. qaš «չորանալ, մուշտակ, մորթ և այլն») – ֆ.-ուգր. լեզուներում կան՝ ֆինն. kesi «կեղև», kesinä «կլավել, պլովել», kesiminen «կլավում, թեփոտում», էստ. köösner «մորթեգործ», կոմի кыс «կենդանու ոտքերի կաշին», кыш «կեղև, թեփ», էրզ. киське «կաշի»

†կեղև (բնիկ սեմական է համարվում՝ ասոր. qəlāfā «գրքի թերթ», եբր. qəluf, qəlef «կեղև, կճեպ», ասուր. qalapu «կլավել» և այլն) – Հ.-ե. և ֆ.-ուգր. զուգահեռները ցույց են տալիս, որ այս արմատը առնչվում է նաև հայերենի կեղ-ել արմատին՝ հուն. σκόλος «կաշի, մորթ», κέλυφος «կեղև», լատին. callum «ամուր կեղև», glūbo, ere «կեղևել», իսլ. skel «խեցի, կեղև», skjall «ծվի թաղանթ», շվեդ. hylsa, skal «կլեպ, կճեպ», նորվ. skall «խեցի, կեղև», skjell «թեփուկ, թեփ», անգլ. hull «կեղև», shell «խեցի», ֆ.-ուգր. լեզուներում՝ ֆին. kalvo «կեղև, թաղանթ», կոմի кульны «կլավել», ուդմ. киль «թեփ, կեղևի թեփ», ինչպես նաև բառասկզբի պայթականի անկմամբ՝ սանս. lōpayati «վիրավորում է», լատիշ. lupt, lupināt «կլավել», լիտվ. luoba, lupena «կլեպ, կեղև», lupinėti «կլավել», ռուս. лупить, ուդմ. лом «կեղանք», էրզ. лав «թեփ», лыводемс «անջատվել, պոկվել», մոկշ. лябомс «կլավել»: Կարծում ենք, նույնն է՝ հայերեն կլեպ: Նմանատիպ կառուցվածք ունենք *անձրև, արև, բարև, տերև* բառերում:

†կնիք (ասուր. kunukku «կնիք», kanīku «կնքված բան», ակկդ. qanāqu «կնիք») /ծնքել/կնքել«դրոշմել». այս բառի ուղղակի զուգահեռներ են՝ իսլ. knosa «տրորել, ջարդել», knyja «թակել», skeina «քերծվածք», hneykja «կոտրել, քանդել», nugga «տրորել», hnifur «դանակ», իսլ. naga, անգլ. knock (հին անգլ. cnocian) «թակել», gnaw (հին անգլ. gnaga) «կրծել», գերմ. nagen, նորվ. knakke «թակել», շվեդ. knäcka «ջարդել, ճեղքել», դան. knuge, նորվ. knuge «սեղմել», դան. knæk «կոտրել», նորվ. gnigge, gnikke, knege «տրորել», knagg «փայտե մեխ,

գամ», nagga «կրծել, ծակել», gnage «կրծել», շվեդ. gnaga «կրծել», nagga «կրծել, ծակել», դան. gnave «կրծել»: Ըստ Հ. Աճառյանի՝ թուրքերենի վրայով անցնելով՝ տվել է հունգ. könyv «գիրք», մորդովին. kon'ov «թուղթ», ռուս. книга «գիրք», ուկր. knyha, բուլղ. kníga ձևերը: Ըստ Մ. Ֆասմերի՝ հունգ. könyv (< h.հունգ. könyü) «գիրք» բառը բուլղ. küiiv ձևից է: Այս արմատը, կարծում ենք, կապվում է նաև գան արմատին և ունի նույնպիսի կազմություն, ինչպես հայ. բարիք, կարիք, ժանիք, տարիք բառերը:

†**ցամաք** (եբր. ֆոգ «չորացնել») - Հ. Աճառյանը գտնում է, որ հայերենը փոխառյալ է ասորական գավառական ձևից: Հ.-ե. ձևերն են, սակայն, սանս. [kšam] «երկիր, հող», լատիշ. zeme, լիտվ. žemė «երկիր, հող», ռուս. земля, ավեստ. zam, լատին. humus, փոյուգ. ζεμέλω «մայր-հող»:

†**փոխ** (ըստ Աճառյանի՝ ասուր. puḫḫu «փոխանակել» բառից): Ֆ.-ուգր. լեզուներում կան՝ ֆինն. vaihde «վերջ, ծայր», vaihdella փոխ(վ)ել, vaihe «փուլ, աստիճան», vaihtaa «փոխ(անակ)ել», vaihto «փոփոխություն, փոխանակում» էստ. vahe «տարբերություն», vaheldama «հերթազայել», vahelduma «հերթազայվել», vahetama «փոխ(անակ)ել», vahetamine «փոխանակում», հ.-ե. լեզուներում՝ իսլ. vixla «փոխել, փոխանակել», vixlari «դրամափոխ», vixill «մուրհակ», շվեդ. växla «փոխել, փոխանակել», «տատանվել», նորվ. veksel «փոխանակում, հերթափոխ, փոփոխություն, մուրհակ»:

†**փրկել** (ասոր. pəraq «փրկեց», purqānā «փրկություն»). կարծում ենք, այս բառը զուգահեռներ ունի հ.-ե. լեզուներում՝ իսլ. borga «վճարել», bjarga «փրկել, օգնել», björg «օգնություն», նորվ. berge «պահպանել, փրկել, (ցորենի) բերքը հավաքել», bergning «փրկություն», շվեդ. bärge «փրկել», bärkning «բերքահավաք», գոթ. bairgan «թաքցնել», հ.անգլ. beorgian «փրկել, պաշտպանել», արևել. լիտվ. birginti «պահպանել», ռուս. беречь, беречь «պահպանել»:

Վերը բերված զուգահեռությունները հ.-ե. և ֆ.-ուգր. լեզուներից առնվազն կասկածի տակ են դնում այս բառերի՝ սեմական լեզուներից փոխառյալ լինելը: Արդյո՞ք զուգահեռությունները պետք է վերագրել նոստրատիկ ընդհանրության շրջանին, դժվար է ասել: Սա առանձին ուսումնասիրության հարց է: Ակնհայտ է միայն, որ հայերենի օտար փոխառությունների խնդիրը նոր մոտեցումներ է պահանջում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Զահուկյան Գ.Բ.** Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 86:
2. **Աճառյան Հ.** Հայոց լեզվի պատմություն, մաս I, Եր., 1940, էջ 185:
3. **Гамкрелидзе Т.В., Иванов В.В.** Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Т. 2.-Тб., 1984.
4. **Նիկողոսյան Գ.Վ.** Հայերենի կովկասյան փոխառությունների հարցի շուրջ, «Բանբեր Երևանի Համալսարանի», Եր., 2008, № 3, էջ 156-163:
5. **Աճառյան Հ.** Հայերեն արմատական բառարան, հհ.1-4, Եր., 1971-1979:
6. **Фасмер М.** Этимологический словарь русского языка. Т.1-4. М., 1964-1973.

Г.В. НИКОГОСЯН

НЕКОТОРЫЕ СЕМИТСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Рассматриваются вопросы иностранных заимствований в армянском языке, в частности некоторых семитских заимствований. Этимологический разбор некоторых армянских корней, считающихся семитскими заимствованиями, показывает, что эти корни имеют параллели в некоторых индоевропейских и финноугорских языках, которые либо не были замечены, либо считались случайными совпадениями. Новейшие исследования в области ностратического языкознания показывают, что вопрос иностранных заимствований в армянском языке требует новых подходов.

Ключевые слова: ностратическое языкознание, семитские заимствования, этимологический пучок, индоевропейская праформа, финноугорские языки.

G.V. NIKOGHOSSYAN

SEVERAL SEMITIC BORROWINGS IN THE ARMENIAN LANGUAGE

The article is devoted to the problem of foreign borrowings in the Armenian language, particularly, to semitic borrowings. Etymological analysis of several Armenian roots which are thought to be borrowings from semitic languages shows that these roots have parallels in some Indo-european and Fenno-ugric languages which either have been ignored or considered as random coincidences. The latest studies in the field of nostratic linguistics show that the question of foreign borrowings in the Armenian language demands new approaches in investigation.

Keywords: nostratic linguistics, semitic borrowings, etymological bunch, Indo-european prototype, Fenno-ugric languages.